

Սոցիոլոգիայի ֆակուլտետի խորհրդի 06.03.2017թ. թիվ 138 նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Օրակարգ.

1. Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Ալեքսանդր Ռոբերտի Ավետիսյանի երաշխավորում դոցենտի կոչմանը
2. Ասպիրանտների ատենախոսական թեմաների և գիտական ղեկավարների հաստատում
3. Ուսանողների կողմից դասախոսներին գնահատման 2016-2017ուստարվա առաջին կիսամյակի արդյունքների քննարկում
4. Ընթացիկ հարցեր:

Լսեցին 1. Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Ալեքսանդր Ռոբերտի Ավետիսյանի երաշխավորում դոցենտի կոչմանը

Ելույթ ունեցան՝ Ա. Մկրտիչյանը, Ա. Աթանեսյանը, Ա. Սահակյանը, Ս. Աստվածատուրովը :

Նշեցին. ք.գ.թ. Ալեքսանդր Ռոբերտի Ավետիսյանը 2013թ.ից դասավանդելով սոցիոլոգիայի ֆակուլտետում, աչքի է ընկել իր մասնագիտական և մանկավարժական որակներով: Հաջողությամբ վարում է մի շարք դասընթացներ, այդ թվում՝ Ռազմական սոցիոլոգիան, Իրավունքի սոցիոլոգիան, Խաղաղության տեսություններ: Հանդիսանալով ՀՀ ՊՆ Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի պետը և Նախարարի ավագ օգնականը, Ա. Ավետիսյանը լսարան է ներբերում արժեքավոր գիտելիքներ և մասնագիտական փորձ, որի շնորհիվ իր դասընթացներն ունեն տեսական և կիրառական կարևորություն: Ուսանողների կողմից դասախոսների գնահատման կիսամյակային արդյունքներով Ա. Ավետիսյանի՝ 2016-2017ուստարվա առաջին կիսամյակի գնահատականն է եղել 4.59:

Որոշեցին. Նկատի ունենալով Սոցիոլոգիայի ֆակուլտետի Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի կարծիքն ու Սոցիոլոգիայի ֆակուլտետի Մրցութային հանձնաժողովի եզրակացությունը՝ երաշխավորել Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի ասիստենտ, քաղաքական գիտությունների թեկնածու Ալեքսանդր Ռոբերտի Ավետիսյանի թեկնածությունը դոցենտի կոչման համար: Համապատասխան կարգով դիմել ՀՀ ԲՈՀ:

Լսեցին 2. Ասպիրանտների ատենախոսական թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը

Ելույթ ունեցան՝ Ա. Մկրտիչյանը, Ա. Աթանեսյանը, Ա. Սահակյանը, Ս. Աստվածատուրովը, Հ. Գևորգյանը, Ա. Խաչատրյանը, Ն. Մելքոնյանը, Մ. Անտոնյանը :

Որոշեցին.

1. Ասպիրանտ Արևիկ Համբարձումյանի ատենախոսական թեման հաստատել <<Զինված ուժերի կերպարի ձևավորման և ուղեկցման ՀՀ տեղեկատվական քաղաքականությունը (սոցիոլոգիական վերլուծություն)>>, գիտական ղեկավար հաստատել՝ Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, ք.գ.դ. պրոֆեսոր Ա. Վ. Աթանեսյանին:
2. Ասպիրանտ Անահիտ Հակոբյանի ատենախոսական թեման հաստատել <<Վիրտուալ սոցիալական տեխնոլոգիաների ազդեցությունը քաղաքացիական մասնակցության վրա(ՀՀ երիտասարդության օրինակով)>>, գիտական ղեկավար հաստատել՝ Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, ք.գ.դ. պրոֆեսոր Ա. Վ. Աթանեսյանին:
3. Ասպիրանտ Արուսյակ Աբգարյանի ատենախոսական թեման հաստատել <<Միրիահայ փախստականների սոցիալական ինտեգրումը հայաստանյան հասարակությունում (սոցիոլոգիական վերլուծություն)>>, գիտական ղեկավար հաստատել՝ փ.գ.դ., Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր Է. Ռ. Գրիգորյանին:
4. Ասպիրանտ Տաթևիկ Կարապետյանի ատենախոսական թեման հաստատել <<Ծնողական խնամքից զրկված երեխաների սոցիալական կապիտալի ձևավորման առանձնահատկությունները հայաստանյան հասարակությունում>>, գիտական ղեկավար հաստատել՝ ս.գ.թ., Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ Մ. Հ. Անտոնյանին: Ղեկավարման թույլատրության ստացման համար ըստ կարգի դիմել ՀՀ ԲՈՀ:
5. Ասպիրանտ Աննա Կարապետյանի ատենախոսական թեման հաստատել <<Վիզուալացումը հայաստանյան երիտասարդների հաղորդակցական ռազմավարություններում (սոցիոլոգիական վերլուծություն)>>, գիտական ղեկավար հաստատել՝ ս.գ.թ., Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ Ն. Ա. Մելքոնյանին:

Լսեցին 3. Ուսանողների կողմից դասախոսներին գնահատման 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակի արդյունքների քննարկման հարցը

Ելույթ ունեցան՝ Ա. Մկրտիչյանը, Ա. Աթանեսյանը, Ա. Սահակյանը, Ա. Խաչատրյանը:

Որոշեցին. Հաշվի առնելով ուսանողների կողմից ֆակուլտետի ստորաբաժանումներին և դասախոսներին տրված գնահատականները՝ շարունակել ուսումնական գործընթացի բարելավմանն ուղղված և մշտապես իրականացվող աշխատանքները:

Նախագահ՝

Ա. Ե. Մկրտիչյան

Քարտուղար՝

Ա. Վ. Աթանեսյան